

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐԶԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**  
**2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇՆԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

„ 30 „01. 2019թ  
 գ.Մերձավան

2018թ Մերձավանի համայնքապետարանի բյուջեն՝ եկամուտների և ծախսերի կատարողականների մասերով ունեն հետևյալ ցուցանիշները.

- 2018 թվականի համայնքի պլանավորված, սեփական եկամուտները կազմել է 36 339 100 ՀՀ դրամ, հավաքագրվել է 46 633 300ՀՀ դրամ, հավաքագումը կատարվել է 128.3%-ով:

**2018թ բյուջեի եկամուտների կատարողականը**

Եկամուտների անվանումը	2018թ տարեկան բյուջե	Պլան	Կատարված	Կատ %
Հողի հարկ	2100,0	2100,0	2232,9	106,3
Գույքահարկ	17350,0	17350,0	18771,3	108,1
Տեղական տուրքեր	298,0	298,0	378,7	127,0
Համայնքի սեփակ.համարվող հողերի վարձակալության	6578,0	6578,0	11933,2	181,4
Այլ գույքի վարձակալության վճար	281,0	281,0	312,5	111,2
Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների ծառայությունների մատուցում	10,0	10,0	20,5	205,0
Տեղական վճար /աղբահանություն և ծնող գումար/	8100,0	8100,0	9939,8	122,7
Ինքն. կառույցների օրին.վճար	1622,1	1622,1	3044,4	187,6
Պետական բյուջեից դոտացիա	62041,5	62041,5	62041,5	100,0
Կապիտալ դրամաշնորհներ	2630,0	2630,0	4750,0	182,6
Հողի օտարումից եկամուտ	21897,6	21897,6	15128,0	69,0
Տարեսկզբի ազատ մնացորդ	25131,9	25131,9	25161,9	104,0

- 2018թ ընթացքում համայնքապետարանը 2002թ ծնված պատանիներին ներկայացրել է Էջմիածնի զինվորական կոմիսարիատ կցագրման:
- Կազմակերպել է Հայաստանի Հանրապետության բանակում ծառայած 1998թ ծնված՝ զորացրված զինապարտների ընդունման, վերահաշվառման, ըստ անհրաժեշտության ապահովել է զինապարտների ակտիվ մասնակցությունը Հայկական բանակի զորավարժանքներին:

- Համայնքի մանկապարտեզի աշխատանքները կորդինացնելու, ժամանակին ու անթերի կատարելու համար 2018թ տրամադրվել, որպես սուբսիդիա՝ 35 215 000ՀՀ դրամ, այն ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի, նորոգումների և սարքավորումներիձեռք բերման համար:
- 2018թ համայնապետարանը բնակիչներից ստացել է 126 դիմումներ, որոնք քննարկվել են ու ժամանակին տրվել են պատասխաններ: Համայնքապետարանը բնակիչների տվել է 763 տեղեկանք, ստացել է 466 պաշտոնական նամակներ, որոնց տրվել են պատասխաններ՝ 462 պաշտոնական նամակներով, կայացվել է ավագանու 12 նիստեր և 68 որոշումներ, տրվել է 104 հրամաններ, համայնքի ղեկավարի 35 կարգադրություններ , ընդունել է համայնքի ղեկավարի 151 որոշումներ:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է 5 530 000ՀՀ դրամական օգնություն՝ ընդ որում.
- ա/ Մերձավանցի նորածին 25 երեխաների ծնողներին 50000-ական ՀՀ դրամ, ընդամենը հատկացվել է 1 250000ՀՀ դրամ
- բ/ Մահացածների ընտանիքներին /գրանցվել է 17 մահ/ 100000-ական ՀՀ դրամ, հատկացվել է 1700000ՀՀ դրամ:
- գ/ Համայնքի սակավ ապահովված ընտանիքներին՝ որպես սոց-օգնություն հատկացվել է 2 580000ՀՀ դրամ:
- Համայնքապետարանը „Կանանց միջազգային տոնի,, „Մայրության և գեղեցկության օրվա,, կապակցությամբ համայնքապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի տան դպրոցի, բուժ ամբուլատորիայի 92 կին աշխատակիցների նվերների համար ծախսել է 373500 ՀՀ դրամ:
- 100 000ՀՀ դրամ արժողությամբ գնվել տոմսեր մայրաքաղաքում կազմակերպված համերգների համար:
- Համայնքը մասնակցել է համապետական շաբաթօրյակին, օգտագործելով 3 միավոր տեխնիկա՝ երկու „Զիլ,, մակնիշի բեռնատար և մեկ տրակտոր ծախսվել է 139000 ՀՀ դրամ՝ վառելիանյութի ձեռք բերման համար:
- Համայնքի փողոցների ասֆալտապատման նախագծերի կազմման համար ծախսվել է 465 000 ՀՀ դրամ:
- Համայնքի փողոցների ասֆալտապատման համար ծախսվել է 2 500000ՀՀ դրամ:
- Համայնքի փողոցների լուսավորության անցկացման նախագծի կազմման համար ծախսվել է 480 000ՀՀ դրամ:
- Համայնքի փողոցների լուսավորության անցկացման համար ծախսվել է 7 476 500ՀՀ դրամ:
- Համայնքի փողոցների լուսավորության լամպերը փոխվել են նոր լուսադիոդային լամպերով, որի համար ծախսվել է 955 200ՀՀ դրամ:
- Համայնքապետարանի շենքի վերանորոգման նախագծի կազմման համար ծախսվել է 240 000ՀՀդրամ:
- Համայնքում նոր գազատար խողովակաշարի անցկացման նախագծի կազմման համար ծախսվել է 210 000ՀՀդրամ:
- Համայնքում աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար տրամադրվել է 3 600 000ՀՀ դրամ:
- Աջակցություն մշակույթի սպորտի և երիտասարդություն հիմնադրամին հատկացվել է 250000ՀՀ դրամ:
- „Հայաստան համահայկական հիմնադրամ,, որպես անդամավճար է հատկացվել 38000ՀՀ դրամ գումար:

- Թերթերի բաժանորդագրման համար հատկացվել է 538 100ՀՀ դրամ:
- Համայնքի մասին հեռուստահաղորդումներ նկարահանելու համար հատկացվել է 226000ՀՀ դրամ:
- Մերձավան համայնքի սկզբում նոր վահանակի ձեռք բերման և տեղադրման համար հատկացվել է 49250ՀՀ դրամ:
- Երեխաների պաշտպանության օրը՝ հունիսի 1-ին համայնքի մանկապարտեզում, դպրոցում և մշակույթի տանը կազմակերպվել է միջոցառումների շարք՝
- Մանկապարտեզում „Երեխաների պաշտպանությանը,, նվիրված միջոցառման „Հեքիաթի հերոսների,, համար վճարվել է 16000 ՀՀ դրամ:
- Հունիսի 1-ին համայնքի մանկապարտեզի 137 սաներ ստացել են նվերներ 287 700 ՀՀ դրամ արժողությամբ:
- Մանկապարտեզի 132 երեխաների համար Ամանորի կապակցությամբ գնվել են 177600ՀՀ դրամ արժողության նվերներ:
- Ամանորի հանդեսին „Ձմեռ Պապ և Չյուն Անուշ,, դերասանների համար վճարվել է 22000 ՀՀ դրամ:
- Մանկապարտեզի խաղալիքների ձեռք բերման համար ծախսվել է 223 200ՀՀ դրամ:
- Մանկապարտեզի աթոռների ձեռք բերման համար ծախսվել է 286 000ՀՀ դրամ:
- Մանկապարտեզի համար գնվել է համակարգիչ, տպիչ մսաղաց և ծախսվել է 371 800ՀՀ դրամ:
- Համայնքապետարանի և մանկապարտեզի տարածքում տեղադրվել է տեսախցիկների համակարգ և ծախսվել է 993 700ՀՀ դրամ:
- Միջնակարգ դպրոցի վերանորոգվող դասարանի համար գնվել է շինարարական նյութեր 192 500ՀՀ դրամ:
- Միջնակարգ դպրոցի համար գնվել է դպրոցական սեղաններ և աթոռներ՝ ծախսվել է 990 000ՀՀ դրամ:
- Համայնքի միջնակարգ դպրոցի առաջին դասարանի 44 սաների համար գնվել է 182 600ՀՀ դրամ արժողության նվերներ:
- Համայնքի մշակույթի տան նկուղային հարկի նորոգման համար ծախսվել է 6 800 300ՀՀ դրամ:
- Համայնքի մշակույթի տան նկուղային հարկի նոր տանիքի կառուցման համար ծախսվել է 994 100ՀՀ դրամ:
- Մշակույթի տան տարածքում տեղադրվել է տեսախցիկների համակարգ և ծախսվել է 596800ՀՀ դրամ:
- Մշակույթի տան նկուղային հարկի վերանորոգման նոր նախագծի կազմման համար ծախսվել է 100 000ՀՀ դրամ:

**2018 թվականի տարեվերջի մնացորդ.**

- Վարչական բյուջե -23 762 079ՀՀ դրամ տնտեսված գումար.
- Ֆոնդային բյուջե -22 593 838ՀՀ դրամ առկա գումար.

**Ընդամենը 46 355 917ՀՀ դրամ.**

- Համայնքում շարունակում է գործել „Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը:
- Համայնքապետարանը ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները և ներկայացրել ըստ պատկանելիության:

- Համայնքապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, գազամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին:

2019թ համայնքի հիմնախնդիրներն են.

- Համայնքի փողոցների և նոր թաղամասերի զիջերային լուսավորության անցկացում.
- Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում՝ փոսալցում .
- Համայնքում կանգառների կառուցում.
- Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազիֆիկացմանը.
- Մշակույթի տան նկուղային հարկի, պարի և սպորտային սենյակների նորոգում.
- Մանկապարտեզի երկու ննջասենյակների հատակների նորոգում.



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ